

ԱԼԻՇԱՆԻ ԱՆՍՏՈՐԱԳԻՐ ԳՈՐԾԵՐԸ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԷԶԵՐՈՒՄ

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

Սկզբից նշենք, որ այս հոդվածի նպատակն է նախ՝ բանասիրական բնույթի լրացուցիչ մանրամասնություններ հաղորդել Ալիշանի այն անստորագիր գործերի մասին, որոնց հեղինակային պատկանելությունը տարիներ (հաճախ տասնյակ տարիներ) հետո այլևայլ առիթներով հավաստել է նա, և ապա՝ ցույց տալ «Բազմավեպում» հրատարակված մեկից ավելի գործերի՝ Ալիշանի գրչի արգասիք լինելը այն դեպքում, երբ դրանց մասին հեղինակը ոչ մի տեղ ոչինչ չի ասել։ Երկու դեպքում էլ այդ բնույթի գործերի ինքնությունը հավաստելը կարևոր է, որովհետև ստորագրված լինելու հետևանքով նրանք հեշտությամբ վրիպել են ուսումնասիրողների աչքերից, հիշատակվել են առանց հեղինակի ով լինելը նշելու, երբեմն էլ՝ վերագրվել են ուրիշներին։ Մինչդեռ դրանք ոչ միայն լրացնում ու լրացնում են Ալիշանի գրական ժառանգությունը, այլև պարզաբանում են այդ ժառանգության հետ կապվող մի շարք կարևոր հարցեր։

1

1844 թ. սեպտեմբերի առաջին կեսին «Բազմավեպը» (№ 17) գրաբարով հրատարակում է անստորագիր մի բանաստեղծություն՝ «Ոգին Հայաստանեաց» խորագրով։ Քանի որ այն նույնությամբ զետեղված է Ալիշանի «Նուագքի» երրորդ հատորում (Վենետիկ, 1858, էջ 164—169), ուրեմն նրա հեղինակային պատկանելությունը որևէ կասկած չի հարուցում։ Մեզ համար կարևորն այն է, որ այդ բանաստեղծությունն Ալիշանը կարդացել է Թարգմանաց տոնի առթիվ միաբանության ներսում կայացած հանդեսի ժամանակ, որը եղել է 1844 թ. օգոստոսի 18-ին։ Ուրեմն Ալիշանն իր վերոհիշյալ բանաստեղծությունը գրել է այդ ժամանակ և Թարգմանաց տոնի առիթով։

1845 թ. մայիսի առաջին կեսին «Բազմավեպը» (№ 9) գրաբարով հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Հովիվը Շիրակայ» գեղարվեստական արձակի առաջին մասը՝ «Կենցաղ հովուաց եւ քաղաքայնոց» խորագրով, հունիսի առաջին կեսին (№ 11) երկրորդ մասը՝ «Լսեն երկինք ձայնի առաքինի մանկանց» խորագրով, օգոստոսի առաջին կեսին (№ 15)՝ երրորդ մասը, որն ունի «Գառունք հալոց» խորագիրը և, վերջապես, հոկտեմբերի առաջին կեսին (№ 19) «Բազմավեպը» հրատարակում է չորրորդ և վերջին մասը՝ «Երախտեաց ծառատունկը»։ Հանդեսում հրատարակված այս մասերից առաջինը, երկրորդը և չորրորդը, իրենց համապատասխան վերնագրերով, Ալիշանը հետագայում նույնությամբ զետեղեց իր «Նուագքի» երրորդ հատորում (էջ 247—264), պահպանելով «Հովիվը Շիրակայ» ընդհանուր խորագիրը և, որ կարևոր է, առանց որևէ թվականի։ Ըստ այսմ՝ «Բազմավեպի» օգնությամբ հնարա-

¹ «Բազմավեպ», 1844, № 17, էջ 271։

վոր է դառնում ճշտել վերոհիշյալ ստեղծագործության տարբեր մասերի գրության թվականները: Այս ճշգրտումը մեզ համար կարևոր է, որովհետև Ալիշանի գեղարվեստական արձակի մասին խոսելիս մշտապես ասվել-կրկնվել է, որ նրա երախայրիքը հանրահայտ «Հուշիկը հայրենեաց հայոց» երկհատոր ստեղծագործությունն է, որը 1862 թ. հունվարից «Բաղմավեպի» էջերում «Հայագիր» ընդհանուր խորագրի ներքո հատվածաբար հրատարակվելուց հետո, առանձին գրքով լույս տեսավ Վենետիկում 1869 և 1870 թթ.: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, արձակ գեղարվեստական ստեղծագործություններով Ալիշանն սկսել է հանգես գալ անհամեմատ ավելի շուտ:

1845 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին «Բաղմավեպը» (№ 18) հրատարակում է գրաբար մի բանաստեղծություն՝ «Ափ յափոյ յորսիկն իմ վերացեալ» խորագրով, որը ստորագրություն չունի: Այն լեզվաոճական բնույթի որոշ մշակումներից հետո ղեկավար է «Նուագքի» երկրորդ հատորում (1857 թ., էջ 158—162) և, ուրեմն, հեղինակն Ալիշանն է: Մեզ համար կարևորը «Բաղմավեպում» բանաստեղծությանը կցված հետևյալ կարճառոտ ծանոթագրությունն է. «Ի 22 աւուր ամսեանն յուլիսի, գայ հանկարծ ի պատուհանն քերդդին դեղձանիկ թռչուն (քանարին), ի վանդակէ ուստեք անշուշտ զերծեալ. և ի դերես հանեալ զխնդութիւն նորայ և զյոյս, ազդէ նմա անդեն զողբս զայս»²: Այսպիսով պարզվում է վերոհիշյալ բանաստեղծության թե՛ գրության թվականը, ամիսն ու օրը (1845 թ. հուլիսի 22) և թե՛ շարժառիթը: «Նուագքի» երկրորդ հատորում նշված է բանաստեղծության գրության միայն թվականը, իսկ մյուս հարցերի մասին ոչ մի խոսք չկա:

Հետաքրքրական մի մանրամասնություն էլ բացահայտվում է 1846 թ. ապրիլի առաջին կեսի «Բաղմավեպում» (№ 7), որտեղ հրատարակված է գրաբար, անստորագիր մի բանաստեղծություն, գրված Մխիթարյան միաբանության արքայաժյու Սուքիաս Սոմալյանի մահվան առթիվ: Այդ բանաստեղծությունը, լեզվաոճական բնույթի աննշան փոփոխություններից հետո, Ալիշանը ղեկավար է իր «Նուագքի» հինգերորդ հատորում (Վենետիկ, 1858, էջ 96—98), որտեղ, սակայն, ունի «Ի նոյն» ոչինչ չասող վերնագիրը: «Նուագքում» այս բանաստեղծությանը նախորդում է մի ուրիշը, դարձյալ գրված գրաբարով, որն ունի «Ի մահ արհի հօր Ս. Ս.» վերնագիրը և որն առաջին անգամ տպագրվել է աջդեղ: Արդ «Բաղմավեպը» հնարավորություն է ընձեռում ճշգրտելու, որ առաջին բանաստեղծության «Ս. Ս.»-ն պետք է վերծանել որպես «Սուքիաս Սոմալյան», որ երկրորդ բանաստեղծության «Ի նոյնը» նույնպես վերաբերում է Սուքիաս Սոմալյանին և որ այդ երկուսն էլ գրվել են նրա մահվան առթիվ: Իսկ քանի որ մեզ ստույգ հայտնի է, որ Սոմալյանը վախճանվել է 1846 թ. փետրվարի 10-ին, ուրեմն Ալիշանն իր երկու բանաստեղծություններն էլ գրել է այդ ժամանակաշրջանում:

«Բաղմավեպի» նույն համարում հրատարակված է «Խօսք Սեկոնդոսի իմաստասիրի առ Անդրիանոս կայսեր» գրաբար անստորագիր հոդվածը: Այստեղ համապատասխան մեկնաբանություններով բերված են Սեկոնդոս իմաստասիրի զանազան հարցումները («Զի՞նչ է մարդ», «Զի՞նչ է սէր», «Զի՞նչ է քուն», «Զի՞նչ է ծերություն») և Անդրիանոս կայսեր՝ նրան տված պատասխանները: Այս ամենը, նորանոր հարցում-պատասխանների հավելումով, նույն-

² «Բաղմավեպ», 1845, № 18, էջ 286:

նությամբ զետեղված է «Սոփերք հայկականքի» առաջին հատորում (Վենետիկ, 1853, էջ 63—70)։ Այս փաստով նախ՝ պարզվում է «Բազմավեպում» հրատարակված վերոհիշյալ հոդվածի հեղինակի ով լինելը և ապա ճշտվում է, որ Ալիշանը 1853 թ. լույս աշխարհ եկած իր «Սոփերք հայկականքի» առաջին հատորի վրա սկսել է աշխատել 1846 թ. սկզբներից սկսած։

1847 թ. նոյեմբերի առաջին կեսին «Բազմավեպը» (№ 21) հրատարակում է Ղևոնդ Մարգարյանի (հետագայում՝ Ալիշանի) գրաբար ճառը՝ «Ներբող յիմաստուն եւ ի սուրբ թարգմանիչս հայոց» խորագրով, որը նա կարդացել էր Ռաֆայելյան վարժարանի հերթական շրջանավարտների ավարտական հանդեսի ժամանակ։ Ստույգ հայտնի է, որ հիշյալ հանդեսը տեղի է ունեցել 1847 թ. սեպտեմբերի 8-ին³, հետևաբար Ալիշանն իր ճառը գրել է այդ առիթով և կարդացել է նույն օրը։

1848 թ. հունվարի առաջին համարում, որպես առաջնորդող, հրատարակված է «Բազմավեպս առ նոր տարի» խորագիրը կրող գրաբար անստորագիր մի բանաստեղծություն. ի դեպ, պարբերականի պատմության մեջ միակ դեպքը, երբ նա նոր տարվա երկարաշունչ առաջնորդողների փոխարեն բանաստեղծություն է զետեղում։ Վերջին մեկ քառյակի բացթողումով այն նույնությամբ հրատարակվել է «Նուագքի» երկրորդ հատորում (էջ 111—112)։ Կարևորը մեզ համար այն է, որ բանաստեղծությունն այստեղ ունի նոր՝ «Առամանորն» վերնագիրը և գրության թիվ նշված է 1849-ը, որն անկասկած սխալ է։

Քննության արժանի է նաև «Բազմավեպի» 1849 թ. հունվարի առաջին համարը, որտեղ հրատարակված է «Խաղաղութեան ձայն հնչեսցի» գրաբար բանաստեղծությունը։ «Նուագքի» երկրորդ հատորում (էջ 123—126) զետեղված լինելու հետևանքով նրա հեղինակային պատկանելությունն արդեն անկասկած է դառնում, բայց, ցավոք, հատորի մեջ նա կորցրել է հասարակական-քաղաքական այն հնչեղությունը, որպիսին ունի «Բազմավեպում»։ Անցել էր 1848 ահեղ թվականը, երբ Վենետիկի փողոցները խուժած ազատաբաղձ իտալացիները բարձրացրեցին ապստամբության դրոշմ և ազդարարեցին հանուր աշխարհին, որ իրենք արյունով ու կոկոսով կնվաճեն իրենց ազատությունը։ Հետևում էին մնացել փողոցային մարտերի յոթ երկար ամիսները, երբ վենետիկցիները դուրսագնամարտի օրինակներ ցույց տվեցին՝ կռիվ մղելով թվով գերազանց ավստրիական զորքերի դեմ, ամբողջ քաղաքը վերածվեց ռազմադաշտի, քաղաքից անպակաս եղան սովը, մահը, համաճարակները։ Արյուն-ավերից վերջապես ազատված լինելու և բաղձալի խաղաղությունը վերահաստատված տեսնելու այս տրամադրությունն է, ահա, որը Ալիշանին հատուկ մեծ պայծառատեսությամբ, անցնում է ամբողջ բանաստեղծության միջով։

Մի քանի ամիս անց, մայիսի առաջին կեսի համարում, «Բազմավեպը» (№ 9) հրատարակում է «Կեցցէ լուսանորոգն Մխիթար» գրաբար անստորագիր ներբող-բանաստեղծությունը։ Այն լեզվաոճական բնույթի աննշան փոփոխություններից հետո զետեղված է «Նուագքի» երրորդ հատորում (էջ 172—177) և, ուրեմն, հեղինակն Ալիշանն է, բայց տվյալ դեպքում կարևորը հետևյալն է։ Ո՛չ ներբողի բովանդակությունից և ո՛չ էլ վերնագրից հնարավոր

³ «Բազմավեպ», 1847, № 19, էջ 293—294։

չէ պարզել նրա գրության շարժառիթը: Օգնում է «Բաղմավեպում» եղած վկայությունն այն մասին, որ միաբանության ներսում Մխիթար Սեբաստացու մահվան հարյուրամյակի առթիվ կայացած սգաժողովում Ալիշանը հանդես է եկել զրարար ներբող-ոտանավորով: Ստույգ հայտնի է, որ միաբանությունն այդ հարյուրամյակը նշել է 1849 թ. ապրիլի 27-ին⁴: Ըստ այդմ՝ պարզվում է, որ բանաստեղծության գրության ստույգ ժամանակը և դրդապատճառը: Ավելի ցնեմք, որ «Նուագըրում» ոտանավորն ունի նոր՝ «Ի հարիւրամեակ լուսանորոգն Մխիթարայ» վերնագիրը:

1850 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին «Բաղմավեպը» (№ 18) գրաբարով հրատարակում է Ալիշանի «Հոգեմտնոյ որդեկաց սիրելեաց աշակերտեցելոց ի Ռափայելէանն վարժարանի, յաւարտ ուսմանցն մարզից յիշատակ» ընդարձակ պոեմը, որն ավարտվում է պարբերականի հաջորդ համարում: Այն վերահրատարակելով իր «Նուագըր» առաջին հատորում (Վենետիկ, 1857, էջ 177—225) նոր՝ «Առ պատանիս, նորընծայս յաշխարհ (յիշատակ պատանեաց)» խորագրով, Ալիշանը, սակայն, թվական չի նշել: Մինչդեռ «Բաղմավեպի» օգնությամբ հնարավոր է լինում նախ ճշտել պոեմի առաջին հրատարակության թվականը՝ 1850 թ. սեպտեմբերի երկրորդ կես, և ապա նրա գրության շարժառիթը՝ Ռափայելյան վարժարանի հերթական շրջանավարտներին հայրենի եղերքները ուղարկելու առթիվ կաղմակերպված հանդիսությունը: Իսկ քանի որ դա կայացել է 1850 թ. օգոստոսի 29-ին, ուրեմն պոեմը գրվել է այդ ժամանակ:

Եվ վերջապես, 1850 թ. դեկտեմբերի առաջին կեսին «Բաղմավեպը» (№ 23) արևմտահայերեն հրատարակում է Ալիշանի «Ազգային վիպասանություն (ազգային մատենագրություն)» հոդվածը, որն ավարտվում է պարբերականի 1851 թ. № 1-ում: Վերջինս լեզվաոճական բնույթի որոշ մշակումներից հետո, նույն վերնագրով զետեղվել է «Հուշիկք հայրենյաց հայոցի» երկրորդ հատորում (Վենետիկ, 1870, էջ 103—127): Այս փաստը մեզ հնարավորություն է ընձեռում պարզելու, որ «Հուշիկք հայրենյաց հայոց» պատմագեղարվեստական արձակի երկրորդ գրքի ատաղձները սկսել են հավաքվել դեռ 1850 թ., այսինքն՝ նրա հրատարակությունից շուրջ քսան տարի առաջ:

2

Այժմ քննենք Ալիշանի՝ «Բաղմավեպի» էջերում տպագրված այն գործերը, որոնց հեղինակային պատկանելությունը ճշտվում է կողմնակի տեղեկությունների հիման վրա:

Պարբերականի 1843 թ. հունվարի առաջին կեսի համարում (№ 1), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ա. Լամարտինի «Աղօթք մանկան զարթուցելոյ» բանաստեղծությունը: Թարգմանչի ով լինելը չի նշված, բայց բանաստեղծությունն ընթերցողներին ներկայացնելով, հանդիսն անում է հետևյալ հավելումը. «Մեր հիմա թարգմանածը «Դաշնակությանց» մեկ կտորն է. ուրիշ անգամ մեկալնեություն ալ ճաշակը կուտանք»⁵: Եվ իրոք, մի քանի ամիս անց «Բաղմավեպը» հրատարակում է «Արցունք» գիտահանրամատչելի հոդվածը, որի վերջում.

⁴ «Բաղմավեպ», 1849, № 9, էջ 145—148:

⁵ «Բաղմավեպ», 1843, № 1, էջ 16:

դարձյալ Լամարտինից կատարված դրաբար չափածո թարգմանություններ, հրատարակվում է նրա՝ «Արցունք» խորագիրը կրող բանաստեղծությունը⁶, որ վերցված է Լամարտինի «Դաշնակներ» ժողովածուից և հանդիսանում է «Աղօթք մանկան զարթուցելու» բանաստեղծության հաջորդ հատվածը, այսինքն, ամսագրի լեզվով ասած, այն «մեկալ կտորը», որի «ճաշակը» նա խոստանում էր տալ առաջիկայում: «Արցունք» հոդվածը, ի տարբերություն նախորդի, բարեբախտաբար ունի «Հ. Ղ. Մ.» ստորագրությունը, այսինքն պատկանում է Ղևոնդ Ալիշանի գրչին: Արդ՝ քանի որ «Աղօթք մանկան զարթուցելու» բանաստեղծությունը կցված ընծայականում տրված խոստումը նույն հեղինակն ի կատար է ածել մյուս՝ «Արցունք» հոդվածում, իսկ սա էլ, իր հերթին, դիտվում է որպես նախորդի բնականոն շարունակությունն ու ավարտը, այստեղից էլ բխում է այն որոշակի եզրակացությունը, որ «Բազմավեպի» 1843 թ. № 1-ում զետեղված Լամարտինի «Աղօթք մանկան զարթուցելու» բանաստեղծության թարգմանիչը Ղևոնդ Ալիշանն է⁷:

Մեզ հետաքրքրող հաջորդ անստորագիրը հրատարակվել է «Բազմավեպի» 1844 թ. հուլիսի երկրորդ կեսի համարում (№ 14), արևմտահայ լեզվով, և ունի «Արագիլ» վերնագիրը: Հեղինակն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում այդ թուղթի մասին, բերելով հին ու նոր հայ պատմիչների վկայությունները նրա աշխարհագրական տարածվածության և վարքագծի վերաբերյալ: Հոդվածն անստորագիր է, սակայն ավարտվում է մեզ համար կարևոր հետևյալ տողերով. «Հայաստան ալ շատ կգտնվի արագիլը, ինչպես կերևնա նաև ազգային խաղե մը, որ Վանա կողմերը շարադրված է և ուրիշ անգամ կդնենք»⁸: Եվ իրոք, երկշաբաթաթերթի օգոստոսի երկրորդ կեսի համարում (№ 16), «Ազգային ռամկական երգեր» ընդհանուր խորագրի տակ, տեսական-բանասիրական փոքր վերլուծությունից հետո, հրատարակվում է հանրահայտ «Արագիլ» ժողովրդական բանաստեղծությունը («Արագիլ բարով էկիր...»): Այս երկրորդ «Ազգային ռամկական երգեր» հոդվածը ունի «Հ. Ղ. Մ.» ստորագրությունը, այսինքն՝ պատկանում է Ղևոնդ Ալիշանի գրչին: Ավելի քան նաև, որ կից հրատարակված «Արագիլ» բանաստեղծությունը Ալիշանը հետագայում նույնությամբ զետեղեց «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում: Այս բոլորից հետո հասկանալի է, որ «Բազմավեպի» 1844 թ. № 14-ում հրատարակված «Արագիլ» հոդվածի հեղինակը նույնպես Ղևոնդ Ալիշանն է: Բանասիրական այս ճշտումի հետևանքով պարզվում է նաև, որ 1852 թ. Վենետիկում հրատարակված «Հայոց երգք ռամկականք» գրքի ատաղձը հավաքվում էր դեռ 1844 թ. կեսերից սկսած:

1845 թ. մարտի առաջին կեսին «Բազմավեպը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է «Կենդանակամար կամ Զոդիակոս» խորագրով մի հոդված, որն ավարտվում է պարբերականի հաջորդ՝ մարտի երկրորդ կեսի համարում (№ 6). այստեղ այն ունի նաև երկրորդ «Ամսոց անունները և նշանները» են-

⁶ Նույն տեղում, № 11, էջ 176:

⁷ Իր «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» աշխատության երկրորդ գրքում (Երևան, 1960), «Բազմավեպի» վերլուծության առթիվ անդրադառնալով սույն բանաստեղծությանը, Ա. Կարինյանը գրում է. «Թարգմանիչն անշուշտ խորեն Գալֆայանն է» (էջ 199): Խորեն Գալֆայանը 1843 թ. ընդամենը 11 տարեկան էր (ծնվել է 1832 թ.):

⁸ «Բազմավեպ», 1844, № 14, էջ 213:

թավերնագիրը: Հոգվածում բնութագրված են ամիսների ու տարիների հետ կապված տոմարական հաշիվները, պատմաբանասիրական բնույթի տեղեկություններ են հաղորդված մեր մատենագրական աղբյուրներում այդ հարցի շուրջ եղած հիշատակությունների մասին, տրված է երկրագնդի տարբեր մասերում նույն ամսին կամ օրը տեղի ունեցած հասարակական-քաղաքական դեպքերի բնութագրությունը: Անստորագիր այս հոգվածի հեղինակային պատկանելությունը ճշտվում է հետևյալ կերպ: «Կենդանակամար կամ Զոդիակոս» հոգվածի ավարտվելուց անմիջապես հետո, 1845 թ. ապրիլի առաջին կեսից, «Բազմավեպը» (№ 7) սկսում է հրատարակել «Ամսոց բնական նշանները» ընդհանուր խորագրի ներքո հրատարակվող և «Հ. Ղ. Մ.» ստորագրությունն ունեցող ինն արձակ գեղարվեստական մանրապատումներից առաջինը: Հրատարակված առաջին մանրապատումը սկսվում է մեզ համար կարևոր հետևյալ ձևով. «Ամսոց վրա աստղաբաշխական և քաղաքական գիտելիքները մեծերու համար պարզ կերպով բացատրելեն ետքը, աղեկ կըլլա, որ տղոց ալ բնական նշանները ցուցընենք ամեն մեկ ամիսը ճանշնալու»⁹: Ակնարկը վերաբերում է նախորդ «Կենդանակամար կամ Զոդիակոս» հոգվածին, որը դիտվում է որպես «Ամսոց բնական նշանների» օրինաչափ նախորդը և նույն հեղինակի գործը: Արդ՝ քանի որ «Ամսոց բնական նշանները» գեղարվեստական մանրապատումների հեղինակը Ղևոնդ Ալիշանն է, ուրեմն նշված «Կենդանակամար կամ Զոդիակոս» հոգվածը նույնպես պատկանում է նրա գրչին¹⁰:

«Ամսոց բնական նշանները» գեղարվեստական մանրապատումների շարքը բանալի է դառնում Ալիշանի գրական ժառանգության հետ կապված բանասիրական բնույթի մի այլ պարզաբանման համար: Դրանցից յուրաքանչյուրը դրվերգում է տվյալ ամսվա առանձնահատկությունները և ավարտվում է գրաբար մի բանաստեղծությամբ: Լեզվաոճական բնույթի աննշան մշակումներից հետո, Ալիշանն այդ բանաստեղծությունները զետեղել է իր «Նուագքի» առաջին հատորում (էջ 133—148), «Պատկերք ամսոց» ընդհանուր խորագրի տակ, սակայն առանց որևէ թվականի հիշատակության: Իսկ քանի որ այդ գրաբար բանաստեղծություններից յուրաքանչյուրը իր արձակ գեղարվեստական մանրապատումի հետ մեկտեղ սկսել էր հրատարակվել 1845 թ. ապրիլից սկսած, ուրեմն հնարավոր է դառնում ճշգրտել նրանցից յուրաքանչյուրի հրատարակության թվականը: Այսպես, օրինակ, «Ապրիլ» բանաստեղծությունը, որը «Նուագքի» առաջին հատորում զետեղված է առանց թվականի, «Բազմավեպում» հրատարակվել է 1845 թ. ապրիլին, «Մայիսը», որը հատորում դարձյալ անթվական է, 1845 թ. մայիսին, «Յունիս» բանաստեղծությունը «Բազմավեպում» հրատարակվել է 1845 թ. հունիսին և այսպես մինչև տարվա վերջը:

Երեք տարի անց, 1848 թ. մարտի երկրորդ կեսի համարում, «Բազմավեպը» (№ 6) հրատարակում է «Ռամկական ծուռ կարծիքներ» խորագրով

⁹ «Բազմավեպ», 1845, № 7, էջ 102:

¹⁰ Ինչպես արդեն նշվեց, «Կենդանակամար կամ Զոդիակոս» հոգվածի շարունակությունը «Բազմավեպում» ունի նաև «Ամսոց անունները և նշանները» ենթավերնագիրը: Այս հանդամանքն էլ շփոթեցրել է աստղագետ Բ. Թումանյանին, որն այդ ամենը դիտել է որպես երկու առանձին հոգված, իսկ նրանց հեղինակի ով լինելու հարցին առհասարակ չի անդրադարձել (տե՛ս Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, հատ. II, Երևան, 1968, էջ 107):

արևմտահայերեն անստորագիր մի հոդված, որտեղ քննվում են տգիտության ու դուրահավատության հետևանքով ժողովրդի մեջ տարածված նախապաշարումները: Հոդվածի հեղինակային պատկանելությունը ճշտելու համար պետք է նշենք, որ սկսած 1847 թ. ապրիլի առաջին կեսից, «Բազմավեպը» (№ 7), «Ավելորդապաշտություն» ընդհանուր խորագրի ներքո, սկսում է պարբերաբար հոդվածներ հրատարակել ավելորդապաշտությունը ծնող ներքին շարժառիթների (№ 7, ապրիլի առաջին կես), հմայքների և նրանց թողած վնասակար հետևանքների (№ 9, մայիսի առաջին կես), աստղերի օգնությամբ զանազան հիվանդություններ բուժելու և գալիքը կանխորոշելու անհեթեթության (№ 10, մայիսի երկրորդ կես), վեցհազարյակի միջոցով շարիքները խափանելու (№ 11, հունիսի առաջին կես) և այս կարգի այլ հարցերի մասին: Վերոհիշյալ «Ռամկական ծուռ կարծիքները» հանդիսանում է այդ շարքի վերջին գործը, ունի նրանց բնորոշ ներքին կառուցվածքը, համոզման տրամաբանական նույն սխտեմը և, մանավանդ, հոդվածում եղած «աս հույսով օրագրիս մեջ հարկ կհամարինք ստեպ-ստեպ այնպիսի ռամկական կարծիքներուն վրա խոսիլ» արտահայտությունը, որով խնդրո առարկա հոդվածը դիտվում է որպես համանման նախորդների օրինաչափ շարունակությունը: Այս փաստերը արդեն ամեն կասկած փարատում են: Հիշյալ ամբողջ հոդվածաշարը պատկանում է «Բազմավեպի» խմբագրի՝ Գաբրիել Այվազովսկու գրչին: Բնականաբար, մեզ հետաքրքրող «Ռամկական ծուռ կարծիքներ» հոդվածի հեղինակը նույնպես Գաբրիել Այվազովսկին է և ոչ թե Ղևոնդ Ալիշանը, ինչպես գրում է Հ. Անասյանը¹¹:

Սկսած նույն 1848 թ. մարտի երկրորդ կեսից, «Բազմավեպը» (№ 6) «Քնար հայկական» ընդհանուր խորագրի ներքո սկսում է հրատարակել հայկական ժողովրդական բանարվեստին, նրա ծագմանը, հայ ժողովրդի կյանքում այդ բանարվեստի կատարած հասարակական դերին նվիրված ուշագրավ հոդվածների մի շարք: Սրանց կառուցվածքը չափազանց ինքնատիպ է. սկզբում տրվում է նորագյուտ որևէ հայկական ժողովրդական բանաստեղծության գիտաբանասիրական վերլուծությունը, ապա զետեղվում է տվյալ գործն ամբողջությամբ: «Քնար հայկական» շարքը շարունակվում է շուրջ չորս տարի, և այդ ժամանակահատվածում հրապարակվում է 14 հոդված՝ համապատասխան բանաստեղծությամբ: Դրանցից միայն մի քանիսն ունեն «Հ. Ղ. Մ.» ստորագրությունը, իսկ ամբողջ շարքի՝ Ալիշանի գրչի արձասիքը լինելը ուղղակիորեն հավաստեց «Բազմավեպը» շուրջ 115 տարի հետո: Հանդեսի 1961 թ. վերջին համարում կարգով ենք. «Բազմավեպին մեջ Ալիշանն ունի նաև «Քնար հայկական» խորագրով բաժին մը, ուր պարբերաբար հայ հանրության կներկայացնեն նախնյաց քերթվածքներ»¹²: Ուրեմն, ամբողջ շարքի նյութերի հեղինակային պատկանելությունն արդեն կասկած չի հարուցում: Գալով «Բազմավեպում» հրատարակված «Քնար հայկական» շարքի անդրանիկ հոդվածին, որն ունի նաև երկրորդ՝ «Ազգահոգի, կամ բնիկ հայկական բանաստեղծություն» խորագիրը և որն անստորագիր է, ապա հարկ է նշել, որ այն սկսվում է հետևյալ ձևով. «Ազգային և ռամկական երգոց հաշակներ ընծայելով ատեն-ատեն օրագրիս մեջ, իմացանք, որ ինչպես մեզի, այնպես էլ

¹¹ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն. գիրք Ա, Երևան, 1959, էջ 603:

¹² «Բազմավեպ», 1961, № 11—12, էջ 279:

մերազնյա ազգասիրաց ալ հաճո են, և չենք դադորի երբեմն-երբեմն հրատա-
րակել նույնպիսի երգեր»¹³։ Գիտենք, որ «Ռամկական երգերը» «Բազմավե-
պի» էջերում պարբերաբար հրատարակում ու քննության նյութ էր դարձնում
Ալիշանը, հետևաբար այս առիթով վկայակոչելով ինքն իրեն, նա հավաս-
տում է, որ այս հոդվածը ևս իր գրչի արգասիքն է։ Համանման մի շարք էլ
«Բազմավեպը» սկսում է 1848 թ. մայիսի երկրորդ կեսից, ուրիշ՝ «Հիշատա-
կարանք հայոց» խորագրի ներքո։ Ի տարբերություն նախորդի, այստեղ հա-
մապատասխան վերլուծականներով ընթերցողին են ներկայացվում հայոց
պատմության այլևայլ շրջանների ականավոր գործիչներն ու նրանց գործե-
րից նմուշներ։ «Հիշատակարանք հայոց» ընդհանուր խորագրով հրատարակ-
վել է յոթ հոդված, որոնցից միայն մեկը՝ 1849 թ. «Բազմավեպ» № 16-ում
հրատարակված «Դրամ Զահրատա թագավորի փոքր հայոց» հոդվածն է. որ
ունի «Հ. Ղ. Մ.» ստորագրությունը։ Ամբողջ շարքի՝ Ալիշանի գրչի արգասիք
լինելը հավաստվեց շուրջ 110 տարի հետո։ 1961 թ. տարեվեպիչյան «Բազմա-
վեպում» այս կապակցությամբ կարդում ենք. «Ալիշանն ունի նաև «Հիշա-
տակարանք հայոց» շարք մըն ալ, ուր հավկական հնություններ, դրամներ
և այլն... կներկայացնե։ Այս բոլորին տակ շատ հազվագյուտ է իր ստորա-
գրությունը»¹⁴։

1848 թ. հունիսի երկրորդ կեսին «Բազմավեպը» (№ 12) արևմտահայ
լեզվով հրատարակում է «Շատորքիան» հոդվածը, որտեղ տրված է «մեծա-
նուն գաղղիացվո» կյանքի ու գրական-հասարակական գործունեության հա-
մառոտ ուրվագիծը։ Հոդվածն անստորագիր է, նրա հեղինակային պատկա-
նելությունը ճշտվում է հետևյալ ձևով. շուրջ երկու ամիս անց «Բազմա-
վեպը» գրաբար լեզվով հրատարակում է «Ի ծովագիտակ տապանն Շատորքիա-
նայ հառաչս մի» խորագրով մի բանաստեղծություն, որը նույնպես անստո-
րագիր է։ Լեզվաոճական բնույթի որոշ փոփոխություններից հետո այն ղե-
տեղված է «նուագքի» հինգերորդ հատորում (էջ 84—90) և, ուրեմն, նրա հե-
ղինակը Ղևոնդ Ալիշանն է։ Հիշյալ բանաստեղծությունն ունի արևմտահա-
լերեն գրված փոքրիկ ծանոթագրություն, որտեղ կարդում ենք մեզ համար
կարևոր հետևյալ տողերը. «Շատորքիան գաղղիացի անմահ մատենագիրը,
որուն կարդալու և դիտնալու արժանի վարքը հունիս ամսույն թերթին մեջ հա-
մառտեցիք...»¹⁵։ Իժվար չէ նկատելը, որ ակնարկված է խնդրո առարկա
«Շատորքիան» հոդվածը, որը դիտված է որպես բանաստեղծությունը գրողի
գրչի արգասիք։ Եվ քանի որ, ինչպես տեսանք, բանաստեղծության հեղինակն
Ալիշանն է, հետևաբար հիշված հոդվածը նույնպես պատկանում է նրա գրչին։

1849 թ. փետրվարի երկրորդ կեսին «Բազմավեպը» (№ 4), «Արձանա-
գիր» խորագրի ներքո, արևմտահայ լեզվով հրատարակում է պատմական
Տրովադայի մասին հունահռոմեական պատմիչների տված զանազան հիշա-
տակությունները, համապատասխան վերլուծություններով։ «Արձանագիրն»
ավարտվում է գրաբար մի ոտանավորով, որն ասես ամփոփիլ խոսք է նա-
խորդ ամբողջ ասվածի համար։ Գրաբար բանաստեղծությունը նոր՝ «Զար-
մայր ևւ բիրն հայոց» խորագրով, նույնությամբ ղեկեղված է «նուագքի»

¹³ «Բազմավեպ», 1848, № 6, էջ 87։

¹⁴ «Բազմավեպ», 1961, № 11—12, էջ 279։

¹⁵ «Բազմավեպ», 1848, № 15, էջ 228։

Խորհրդ հատորում (էջ 186), հետևապես նրա հեղինակը Ալիշանն է: Իսկ քանի որ «Արձանագիրը» հանդիսանում է բանաստեղծության յուրատեսակ ներածությունը, ուրեմն նրա հեղինակը ևս Ղևոնդ Ալիշանն է: Համանման մի բացահայտում էլ հնարավոր է լինում անել 1849 թ. սեպտեմբերի երկրորդ կեսի «Բազմավեպում» (№ 18): Այստեղ էլ, նույն «Արձանագիր» ընդհանուր խորագրի ներքո, հրատարակվում է Մուշեղ Մամիկոնյանի կյանքն ու գործը բնութագրող արևմտահայերեն անստորագիր մի հոդված, որն ավարտվում է նրան նվիրված գրաբար երկտողով: Այս երկտողը որոշ մշակմամբ և նոր՝ «Մուշեղ քաջակորով» վերնագրով զետեղված է «Նուագքի» նույն երրորդ հատորում (էջ 187), ուրեմն նրա հեղինակի ով լինելն անկասկած է: Իսկ քանի որ Մուշեղ Մամիկոնյանին նվիրված արևմտահայերեն հոդվածը գրաբար երկտողի բնականոն սկիզբն է ու լրացումը, ուրեմն այն ևս պատկանում է Ալիշանի գրչին: Ավելացնենք նաև, որ երկու դեպքում էլ ընդհանուր «Արձանագիր» վերնագիրը դարձյալ գալիս է հավաստելու նրանց հեղինակների նույնությունը:

Ալիշանի գրական ժառանգության հետ կապված մի կարևոր բացահայտում էլ օգնում է մեզ անելու «Բազմավեպը», 1849 թ. երկրորդ կեսի համարով: Այստեղ հանդեսն ազդարարում է բոլորովին նոր՝ «Մաղկաքաղ հայկական» բաժնի սկզբնավորությունը, որտեղ չափածո և արձակ զանազան հատվածներ են զետեղվում մեր մշակույթի հին և միջնադարյան դասականների գործերից: «Մաղկաքաղ հայկական» բաժնի մասին ազդարարությունը սկսվում է մեզ համար կարևոր հետևյալ ձևով. «Ինչ դիտմամբ որ հայկական քնարով կրնժայենք մեր ազգային ընտիր քերթվածները և բանաստեղծությունները, նույն դիտմամբ կուզենք երբեմն ազգային դպրոթենե արձակ շարադրությամբ ընտիր հատվածներ ալ ընժայեցնել»¹⁶: «Հայկական քնար» ակնարկը, ինչպես դժվար չէ մակաբերելը, վերաբերում է Ալիշանի «Քնար հայկական» շարքին, իսկ քանի որ այս «Մաղկաքաղ հայկական» բաժինը դիտվում է որպես նախորդի բնականոն շարունակությունն ու նույն հեղինակի գործը, ապա, ուրեմն, այս բաժնում եղած նյութերը ևս ծանոթագրում և հրատարակության էր պատրաստում Ալիշանը: Այսպիսով, «Բազմավեպում» մինչև 1880-ական թթ. իր «առօրյա» հոդվածներից, բանաստեղծություններից, գեղարվեստական արձակ գործերից ու թարգմանություններից զատ, Ալիշանն իր սեփական նյութերի հենքի վրա ստեղծել ու վարում էր երեք ինքնատիպ ու կարևոր բաժիններ՝ «Քնար հայկական», «Հիշատակարանք հայոց» և «Մաղկաքաղ հայկական»:

1850 թ. հունվարը «Բազմավեպը» սկսում է «Հոբելյան տարի» անստորագիր, արևմտահայ լեզվով գրված առաջնորդող հոդվածով: Հոդվածի հեղինակային պատկանելությունը ճշգրտելուն նպաստում է մեկ տարի հետո, 1851 թ. հունվարի առաջին կեսին «Բազմավեպում» հրատարակված առաջնորդողը, որն ունի «Երկհազարյակն Արշակունյաց» խորագիրը և որի «Հ. Ղ. Մ.» ստորագրությունը վկայում է նրա հեղինակի ով լինելու մասին: Այս երկրորդ առաջնորդողում կարդում ենք. «Անցյալ տարվույն սկիզբը, հոբելյանի վրա խոսելով նշեցինք...»¹⁷: Դժվար չէ նկատել, որ ակնարկը վերա-

¹⁶ «Բազմավեպ», 1849, № 12, էջ 130:

¹⁷ «Բազմավեպ», 1851, № 1, էջ 3:

բերում է «Հոբելյան տարի» հոգվածին, որն Ալիշանը վկայակոչում է որպես իրենը: Հետևաբար պարզ է, որ 1850 թ. հունվարի առաջին կեսին «Բաղմավեպում» հրատարակված «Հոբելյան տարի» անստորագիր հոգվածի հեղինակը ևս Ղևոնդ Ալիշանն է:

1850 թ. հուլիսի առաջին կեսին «Բաղմավեպը» (№ 13) արևմտահայ լեզվով «Լուր և տես Հայաստանի» ընդհանուր խորագրի ներքո հրատարակում է «Հայաստան» հոգվածը, որտեղ բերված են մեր հնօրյա պատմիչների վկայությունները պատմական Հայաստանի բնաշխարհի մասին: Այդ ընդհանուր խորագրի ներքո, տարբեր հաճախականությամբ, «Բաղմավեպը» աստիճանաբար հրատարակում է էլի հրեք հոգված, նվիրված Բարձր Հայքի և նրա մի մասը կազմող Եկեղյաց գավառի պատմությանն ու աշխարհագրությանը¹⁸, պատմական Երզնկա գավառին և այնտեղ գործած ականավոր հայազգի ուսումնականներին¹⁹, ապա՝ կենսագրական-մատենագիտական տեղեկություններ են հաղորդում Հովհաննես վարդապետ Երզնկացու մասին²⁰: Հիշյալ շարքի շորս հոգվածներից և ոչ մեկը ստորագրված չէ և նրանց՝ Ալիշանի գրչի արգասիք լինելը հավաստում է Արսեն Ղազիկյանն իր «Հայկական մատենագիտության» Ալիշանին նվիրված բաժնում²¹:

«Բաղմավեպի» 1854 թ. մարտի առաջին կեսի (№ 5) համարում հրատարակված է «Հանգիստ հօր վարդապետի Մխիթարեան Ազգերեան հ. Մկրտչի» ընդարձակ անստորագիր մահախոսականը, որն արևմտահայերեն է՝ չնայած իր գրաբար վերնագրին: Այնտեղ հանդիպող մեկ-երկու մոլթ ականակներից, Ավգերյանի կենսագրության որոշ մանրամասների վերաշարադրումից կարելի էր ենթադրել, որ մահախոսականի հեղինակը Ալիշանն է: Այս ենթադրությունը անվիճելի փաստ է դառնում, երբ հարյուր տարի հետո, 1954 թ. հունիս-հուլիսյան միացյալ համարում «Հ. Մկրտչի Ավգերյան» խորագրի ներքո, «Բաղմավեպը» հրատարակում է Մեսրոպ Ճանաչյանի ուշագրավ հոգվածը՝ նվիրված վերջինիս մահվան հարյուրամյա հոբելյանին: Այստեղ էլ Ճանաչյանը, ընդարձակ մեջբերումներ անելով խնդրո առարկա մահախոսականից, ուղղակի հավաստում է, որ նրա հեղինակը Ղևոնդ Ալիշանն է²², Ստույգ հայտնի է, որ Մկրտչի Ավգերյանը մահացել է 1854 թ. մարտի 3-ին, հետեվաբար ճշտվում է նաև մահախոսականի գրության ժամանակը:

1860 թվականի հունվարի առաջին կեսի համարում «Բաղմավեպը» (№ 1), արևմտահայ լեզվով, հրատարակում է «Հայկա շրջանն և տոնն» անստորագիր առաջնորդող հոգվածը, որն ունի հետևյալ կարևոր ծանոթագրությունը. «Այս ճառն, ինչպես գիտեն օրագրիս ընթերցողները, անցյալ տարի Մուրատյան վարժարանին պարգևատրաշխության հանդիսին օրը խոսված է, և ահավասիկ, ըստ մեր խոստմանը կը հրատարակենք զայն»²³: Եվ իրոք, «անցած տարի», այսինքն 1859 թ. օգոստոսի 11-ին, տեղի էր ունեցել Մուրատյան վարժարանի աշակերտների հերթական պարգևատրաշխության հանդեսը, որի հանդամանալից նկարագրությունը տալուց հետո «Բաղմա-

18 «Բաղմավեպ», 1850, № 17, էջ 263—264:

19 Նույն տեղում, № 19, էջ 296—300:

20 «Բաղմավեպ», 1851, № 14, էջ 213—219:

21 Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն, Վենետիկ, 1909—1912, էջ 34:

22 «Բաղմավեպ», 1954, № 6—7, էջ 169:

23 «Բաղմավեպ», 1860, № 1, էջ 3:

վեպը» նշում էր. «Վարժարանիս հարգո վերատեսուչը, հ. Ղևոնդ Ալիշանյանց վարդապետը, ... համառոտեց Հայկա թվականին պատմությունն, պատճառն և իշխեն պարբերություններն՝ լի հետաքննին և ազգասեր տեղեկությամբ»²⁴: Այսպիսով, միաժամանակ հնարավոր է լինում պարզել, որ վերոհիշյալ «Հայկա շրջանն և տոնն» անստորագիր հոդվածի հեղինակը իրոք Ղևոնդ Ալիշանն է, որ այն կարդացվել է պարզաբաշխության հանդեսի օրը՝ 1859 թ. օգոստոսի 11-ին, ուրեմն գրվել է այդ ժամանակ և այդ առիթով և, որ այն հրատարակվել է շուրջ վեց ամիս հետո, «Բազմավեպի» 1860 թ. հունվարի առաջին կեսին: Այս ճշգրտումը մեզ համար բանալի է հանդիսանում մոտ մի տարի հետո՝ 1861 թ. հունվարի առաջին կեսին «Բազմավեպում» (№ 1) հրատարակված «Ի հիշատակի դարադարձի ծննդյան Սամվելի Մուրատա և ի քսաներորդի վեցերորդի տարեկան հանգիսի վարժարանին նորա» արևմտահայերեն անստորագիր հոդվածի հեղինակային պատկանելությունը պարզելու հարցում: Սույն հոդվածը սկսվում է մեզ համար կարևոր հետևյալ մի պարբերությամբ. «Անցյալ տարի, համանման օր մը, պատիվ ունեցա հայ ազգին հնագույն և փառավորագույն հանգիսի մը հիշատակը հռչակել, այսինքն՝ յուր Հայկ նախահոր տոնը»²⁵: Նախ՝ «Անցյալ տարի», այսինքն՝ 1860 թ. օգոստոսի 5-ին, հնգկահայ հարուստ Սամվել Մուրատի ծննդյան հարյուրամյակի առթիվ կայացած հանդիսության ժամանակ զեկուցմամբ հանդես էր եկել Ղևոնդ Ալիշանը. մի բան, որն ուղղակի հավաստում էր «Բազմավեպը»²⁶: Եվ ապա՝ ինչպես դժվար չէ նկատելը, պարբերության վերջում ակնարկված է վերոհիշյալ «Հայկա շրջանն է տոնն» հոդվածը, որի հեղինակը, ինչպես տեսանք, Ղևոնդ Ալիշանն էր: Այս բոլորից բխող եզրակացությունն այն է, որ խնդրո առարկա «Ի հիշատակի դարադարձի ծննդյան...» անստորագիր հոդվածի հեղինակը ևս Ղևոնդ Ալիշանն է, որ այն գրվել է Սամվել Մուրատի ծննդյան հարյուրամյակի առիթով և այդ ժամանակ (այսինքն՝ 1860 թ. հուլիսի 11-ին), կարդացվել է 1860 թ. օգոստոսի 5-ին, այդ բարերարին նվիրված հոբելյանական հանդիսության առիթով, և հրատարակվել է «Բազմավեպում» 1861 թ. հունվարի առաջին կեսին:

1861 թ. մայիսի 1-ին «Բազմավեպը» № 5) արևմտահայերեն լեզվով հրատարակում է «Ոսկեփորիկի մը մեջ եղած քանի մը ազգային երգեր» խորագիրը կրող արևմտահայերեն անստորագիր մի հոդված, որտեղ, խոսելով ժողովրդական հայկական երգերի մասին, հոդվածագիրն անում է հետևյալ ուշագրավ հավելումը. «Այսպիսի գեղեցիկ երգեր ատեն-ատեն դրած ենք «Բազմավեպի» մեջ, երբեմն նաև՝ հանդերձ խորհրդածությամբ»²⁷: Արդ՝ հանրահայտ է, որ հայոց ազգային երգերը ջանասիրաբար հավաքում և «Բազմավեպի» էջերում տարիներ շարունակ պարբերաբար հրատարակում էր Ղևոնդ Ալիշանը, ինչը և ակնարկված է: Եվ եթե շմոռանանք, որ հիշյալ հոդվածը ևս ունի ճիշտ նույն կառուցվածքը, ինչ Ալիշանի՝ համանման բնույթի մյուս հոդվածները (փոքր ընծայական, ժողովրդական երգի բնագիրը, ապա գրականագիտական ու բանասիրական համապատասխան վերլուծությունը), ապա

²⁴ «Բազմավեպ», 1859, № 10, էջ 290:

²⁵ «Բազմավեպ», 1861, № 1, էջ 5:

²⁶ «Բազմավեպ», 1860, № 10, էջ 289—290:

²⁷ «Բազմավեպ», 1861, № 5, էջ 145:

պարզ է դառնում, որ «Ոսկեփորիկի մը մեջ ևղած քանի մը ազգային երգերը» պատկանում է Ղևոնդ Ալիշանի գրչին:

Եվ վերջապես՝ 1861 թ. հոկտեմբերի 1-ին «Բաղմավեսը» (N 10) արևմտահայերեն լեզվով հրատարակում է Ալիշանի «Ուսումն հայրենյաց, բնախոսություն Հայաստանի» ճառը, որն ավարտվում է պարբերականի անմիջապես հաջորդ համարում: Մեզ համար կարևոր է նրա հետևյալ ծանոթագրությունը. «Այս ճառը Մուրադյան վարժարանին աս տարվան պարզաբաշխության օրը կարդացված է, և զաղդիարեն բնագիրն ալ հրատարակված էր»²⁸: Արդ՝ ստույգ հայտնի է, որ Մուրադյան վարժարանի ավարտական պարզաբաշխության հանդեսը տեղի է ունեցել 1861 թ. օգոստոսի 12-ին, հետևաբար Ալիշանի ճառը գրվել է այդ առիթով և այդ ժամանակ, «զաղդիարեն բնագիրը» նույն 1861 թ. հրատարակվելուց հետո (ունի «Physiographie de L' Arménie» վերնագիրը), անփոփոխ վերահրատարակվել է 1870 թ., և ապա՝ հիշյալ ճառը ատաղձ է հանդիսացել «Հուշիկը հայրենյաց հայոցի» Ա հատորի «Բնախոսություն Հայաստան աշխարհի» գլխի համար: Սա էլ նշանակում է, որ 1869 թ. հրատարակված «Հուշիկը...»-ի Ա հատորը «սկսվում էր» դեռ 1861 թ.:

НЕПОДПИСАННЫЕ РАБОТЫ АЛИШАНА В ЖУРНАЛЕ «БАЗМАВЕП»

С. А. ШТИКЯН

(Резюме)

В начале своей литературной и научной деятельности Гевонд Алишан опубликовал без подписи в журнале Конгрегации венецианских Мхитаристов «Базмавеп» ряд критических статей, арменоведческих заметок, стихотворений, художественных переводов (с французского и немецкого). С помощью сопоставления этих и подписанных произведений Алишана и при учете характерных особенностей его творчества в статье уточняется и доказывается авторство некоторых работ Алишана и время их написания.

²⁸ Նույն տեղում, N 10, էջ 311: